

ՀԱՆԴԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ



ԿԵՍԱՐ ԳԱՆԴՈՒԻ

Բանասէր ճանապարհորդն Լոմպարդոյ Պրիվիոյ աւանին մէջ, մերձ՝ ի Միլյան աղքատին անակ մը կը տեսնէ, ուր զարբնոյն ուրագն բոլոր օրը սալին վրայ բաղխելով իր ձայնով կը հնչեցրնէ զշշակսյս։ Այն ողորմելի տան մէջ աշխարհք եկաւ տղիտութեան ջաղը խիչ և գործօնէութեան պատկերն եւսար գանդու, որուն գրաւոր երկասիրութիւնքն ոչ միայն յիտալիս այլ և ի բովանդակ Երլոպա և անդր քան զՈվկիան արձագանդ ունեցան։

Ծնաւ սա յամին 1807 դեկտեմբերի 8ին, և իր ուսումնական տաղանդն երիտասարդ հասակէն կը ցուցընէր։ Տանուեօթը տարեկան Սոնտրիոյի վարժարանին մէջ դպրութեանց ուսուցիչ եղաւ. քսան տարեկան գոմոյին

մէջ, և քիչ վերջը՝ ի Միլյան Ցէրութեան Լիկէոններուն մէջ վարժապետ կարգեցաւ։ Արդէն նոյն ժամանակները հրատարակեր էր իւր Ալկիզօ կամ Լոմպարտական դաշնակցութիւնն, Լոմպարտոյ պատանեաց ընծայեալ, և որ կրկին տպագրեցաւ յամին 1876 լենեանոյի եօմներորդ դարագարձին առթիւ։ Այս երկասիրութեանս յաջորդեց Գոմոյի Պատմութիւնը, և մի և նոյն ժամանակ բանաստեղծական ճառավով մը Գոմոյի ժողովուրդը կը խարազանէր, որոնք կը վճռէին Բասդա անուն գուսանին յիշատակ կանգնել, մոռացութեան մէջ թողլով զՎորդա, զՇոշակաւոր գտիչն ելեկտրական բարդին (Pilla)։

Սակայն կանուխ հասակէն հարկ ե-

դաւ որ Գանգու թշուառութեան գըպ-
րոցին մէջ վարժի, քանանուերկու տա-
րեկան կորսնցուց հայրը, և իրեն վրայ
ինկաւ մօրը և ինն եղբարց հոգը, և
ապրուստնին գտնելը : Այն հասակին
մէջ իրեն մեծագոյն համբաւ պատճա-
ռողն եղաւ Լոմպարտիոյ Պատմու-
թիւնն ժի դարուն մէջ, իրը մեկու-
թիւն մը խոսեցեալը դրոց Մանցոնիի,
ընծայեալ առաջմապարտացի պատանիս
որբ ինքնին յուսով լցեալ՝ հայրենեաց
տկնկալութիւնները կը բորբքէք » :
Սակայն տեսնենք ինչ պատզաբերեց ՚ի
ոկզբան անդ այդ խորին երկասիրու-
թիւնն : Նոյեմբերի 4 ին (1833) առա-
ւոտը ընդունայն տեղ աշակերտը ի-
րենց վարժապետին կը սպասէին . ՚ի
տան՝ մայրն և եղբարըն ողբոյ և կոծոյ
մէջ էին . և զեռահասակ զլուխն ըն-
տանեաց Ա . Մարգիերիդայի բանտին
մէջ փակուած ինքնիրեն կը հարցըներ .
« Տվարդեօք եղբարցո մանաւանդ թէ
և որդւոց հաց պիտի ճարէ » : Նոյն
ժամանակի բանտերն արդի եղածնե-
րուն նման հեշտին չէին, ուստի « նա-
հաստակք » և երեսփոխանք դուրս կ'ել
էին, այլ ՚ի խորս անդ՝ Արիլակէրկի և
կախաղանի ստուերներն կը նշմարուէ-
ին : Այն տեղ մնաց Գանգու 13 ամիս . և
այն առանձնութեան մէջ գրեց Մար-
կերիդա Բորսդերլա վիպասանական
պատմութիւնը : Դեռ մերձաւոր տա-
րիներուու մէջ օր մը Գանգու կը ցուցը-
նէր բարեկամացը, որոնք իրեն այցե-
լութեան եկած էին Տէրութեան դիւա-
նին մէջ, իր բանտարգելութեան հրա-
մանագիրը, զոր այն տեղ թօղուցեր էր
Աւատրիա :

Այլ Գանգուի ապրուստի միջոց չէր
մնացած . Աւստրիա զրկեր էր զինքը
ուսուցչութեան աթոռէն : Բազդին յա-
ջողեց որ Բոմպա տպագրապետին հան-
դիպեցաւ, որ ամենին չտարակուսե-
ցաւ այն սքանչելի Ընդհանուր Պատ-
մուքեան տպագրութեան ձեռք զար-
նելու, անսպառ աղբիւր մը դարուց
թատերախալին, յորում կը շրջի մարդ-
կութիւնն իրքն մէկ ընտանիք, որ բը-

նութեան վլսասակար և մարդուս հա-
կասական տարերաց հետ անվերջանա-
լի պատերազմաւ միշտ իր էութեան
գաղտնի նպատակին կը դիմէ : ի գո-
վեստ այս իր Ընդհանուր Պատմու-
թեան զայս միայն ըսենք, որ գրեթէ
իւրոպայի ամեն ծանօթ լեզուներով
թարգմանուեցաւ, և պատմագիրք ի-
րենց գրոց մէջ զանազան տեղ Գանդուկի
ըսածներն յառաջ կը բերեն :

Անկարելի է մեղի այս համառօտ
կենսագրութիւննեան մէջ իր ամենայն վաս-
տակոց ետևէն հասնիլ . լեգէոն մը կը
կազմեն աննկուն պատմաբանիս, բա-
նաստեղիս, վիպասանիս և ժողովրդ-
դական մատենագրիս երկասիրութիւն-
քըն : Հինգ եռանդնալից նամակներով
գրեց Հինգ աշուրց (Le Cinque giore-
nate) պատմութիւնը (1848) : Առ ժա-
մանակեայ վարյութեան ատեն ժողո-
վըրդական ուղիղ գգացումներ զար-
թուցանելու համար՝ գրեց Գարյան
պրոլայոյի բարոյական Խօսակցորդիւն-
քը : Արտաքսելով Աւստրիոյ Տէրութե-
նէն, շրջեցաւ յաքսոր ՚ի Գաղղիա և ՚ի
Զուլցցերի, և 1849ին թօղութենէն
վերջը զարձաւ ՚ի հայրենիս . և հոն ՚ի
Միլան ուսմանք կը զրալէր, արժանա-
նալով Պրոֆֆերիցի Խօսպին, թէ և իրը
մենք հոս (Միլան) անի լրագիրներ
գրելու ետևէ ենք, դու չես գաղրիր
օգտակար գրերը հրատարակենք » (18
փետր. 1855) : Նոյն ժամանակ գրած-
ներն էին բարինիի և Պերքարիայի վը-
րայ, և Քիչ վերջը կը սկսէր իր իւսա-
լացցոց Պատմութիւնը և Տարեգրու-
րինը (Cronistoria) : Այս վերջին եր-
կու գրուածքն գաղղիարէն լեզուով ալ
թարգմանուած և տպագրուած են :
Ո՞ւր թօղունք իրեն ժողովրդական շատ
մը գրբոյներն, որոնցման թէ մանկա-
կան փափուկ հասակը կը կրթէ և թէ
երիտասարդ անգարդ գործաւորին
սիրած կը զարդարէ . այսպիսէիք են բա-
րի մանուշ և Պատմանեակ, որ քառա-
սոն տպագրութենէն աւելի ունեցած
է, և ՚ի Գաղղիա ասոր ոճոյն հետևեած
է Տիկինն Գասդիւ : Քաղաքակիրք

պատանի, բարի ազդմունք, Ռշա-
դուռքիւն, Գործարուն, և այլն :

Անհիմն է իր վրայ եղած հին ամ-
բաստանութիւնն՝ իրը թէ Մաքսիմի-
լիանոս Արքիոքսին կողմնակից եղած
ըլլայ ընդդէմ իր հայրենեաց . յայտնի
կեցած են աւատրիական ոստիկանու-
թեան այն ժամանակին թողած ծա-
նուցագրերն, որոնցմով Գանդուի գըր-
քերն կ'արգիլուէին, « որովհետեւ ա-
սոնց դիտումն էր անպատիւ և անուան-
արկ ընել Աւատրիոյ տան վեհագուն-
քը՝ ի պաշտպանութիւն խնդրոյ հպա-
տակ ազգաց թերակղզոյն » :

Գանդու այժմ 74 տարեկան է, բայց
երբ մէկն տեսնայ Տէրութեան գիւա-
նին (որուն տեսուչն է) ուղղորդ սան-
դուղներէն արագութեամբ իրեն վերել-
լելը, ընկերական տեսակցութեանց մէջ
պտրտիլը և փորցցաց մէջ ուղիղ քալելն,
կը զարմանայ իրեն կայտառ ծերու-
թեան վրայ՝ որ յաղթական կը յառա-
ջէ ընդդէմ ժամանակին և իրեն հետ-
քերած արկածից : իւր կենդանազիրը
ներկայացուցած ժամանակին պատ-
շաճ կը սեպէնք արտաքին կազմուած-
քին և մոտաւոր ձրից նկատմամբ հե-
տեեալ նկարագրութիւն դնել այս տեղ,
նոյն իսկ իր մէկ բարեկամին խօսքե-
րովս : « Գանդու աւելի կարճահասակ
կրնայ ըստուիլ, սակայն լաւ համեմա-
տեալ և առանց պակասաւորութեան
մը . կանգուն և համարձակ կը քայէ :
Գլուխին բոլորաձեւ, կարծես խնամքով
մը կը պահէ երկայն փայլուն և սպի-
տակ մաղերը, կեղծամբործածողի մը
նման : Դէմքն այն անբացատրելի յայտ-
արարութիւնը կը ներկայացընէ, զոր
լաւ զիտելով, գրեթէ ամեն երևել

մարդու վրայ կարելի է նշմարել : Երր-
թունքն որ գուն ուրեք կը շարժին 'ի
ծաղր, սակայն չափազանց լուրջ երեսցի
մը չեն ընծայեր . այտերն առողջ և տը-
ղու մը պէս շառագոյն . բերանն և ուրե-
գունքն կանոնաւոր : Լայն և ուռուցեալ
ճակատուն վրայ երբեմն խորչք կը
ձեանան . խոռոշացեալ աչքերն թա-
փանցող նայուածք մ'ունին . ամենա-
պարզ կը հագուի մթին գունով : Պարզ
կը խօսի, համարձակ և ամենուն հաս-
կանալի . ընդհանրապէս քիչ խօսք ու-
նի և ոչինչ աւելորդ, այլ երբ գոհ ըլլա-
յայ, քան զշափն իսկ կ'անցնի՝ իր զօ-
րաւոր հանճարոյն դրդմամբն յանկար-
ծական ճառակը հրապարակախօսելով » :

Առաւոնները արեւուն հետ կ'ելլէ, և
ամեն օր անվիրէպ Տէրութեան դիւանը
կ'երթայ, որուն ընդարձակ սրահներն
ինքն կարգաւորած է անապատականի
համբերութեամբ . վերջապէս Գանդու
իր անխօնջութեամբն կարծես այն նշա-
նաւոր սրբոյն կը հետեի, որ իրեն հանդ-
չել խորհուրդ տուղին կը պատաս-
խանէր, թէ « Բոլոր յաւիտենականու-
թիւնը ունինք մեզի 'ի հանգիստ » :

Ի վերջյ չենք ուզեր մոռնալ յիշեցը-
նելու ընթերցողաց, որ անշուշտ ծանօթ
է իրենց նշանաւոր մատենագրիս երեք
ժողովրդական զրոց ազգային թարգ-
մանութիւնքն . այսինքն, Գարյամզրո-
ճիոյ (Կարողոսի խրատք), Քաղաքակիրթ
(Առաքինի և Քաղաքակիրթ պատանի)
և Պատանեակ (Առակախօս Սերովիքէն).
յորոց առաջին երկուքն առանձին ալ
հրատարակուած են . իսկ երրորդն՝
Բաղմավիպիս Հատորներուն մէջ (Տ.
1864) :